ՀԱՍՄԻԿ ՊԱՐԱՆՅԱՆ

ՀԱՅ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՍՊԵՏԸ...

Յուրաքանչյուր ազգի պատմամշակութային ժառանգության մեջ լինում են ֆենոմեններ, որոնց ի հայտ գալը փոխում է կերպարվեստի զարգացման հետագա ընթացքը՝ դառնալով այն ավելի առաքինի ու բազմաբովանդակ ճանապարհով: Խոսքը այն անհատների մասին է, որոնց վիճակված է իրենց խոշոր տաղանդով եւ կատարողական հմտությամբ ազգային՝ այս դեպքում քանդակագործական արվեստը բարձրացնել նոր աստիճանի՝ հասցնելով այն դասական մակարդակի: Եւ արդ, այդ ֆենոմենը մեր արվեստում Արա Սարգսյանն է: Նրա կերտվածքները ճշմարտացի են, կենդանի, դրանց մեջ արտացոլված են կյանքի, իրականության բազմատեսակ երեւույթներ, հասարակության ամենատարբեր ներկայացուցիչներ, ազգային խոր գաղափարներ ու այս ամենը համեմված է ըմբոստ, պաթետիկ պոռթկումներով եւ արդարացված դրսեւորումներով:

Մեր արվեստասեր հասարակությունը ճակատագրի բերումով ու նաեւ ոչ երանելի ժամանակաների քմահաճույքով բավականին ուշ սկսեց ուսումնասիրել հայ քանդակագործական դպրոցը պրոֆեսիոնալ, բարձրարժեք ուղու վրա դնող այս յուրատիպ անհատականության արվեստը:

Գիտական նյութի ուսումնասիրության փորձը ցույց է տվել, որ արվեստագետի ապրած եւ արարած ժամանակները շատ հաճախ գուշակում են նրա ստեղծագործական ժառանգության էությունը, սակայն այս ամենը միանշանակ չէ, որովհետեւ իրական կերտող, արարող արվեստագետները մնում են ստեղծագործական անհատականություններ, թեպետ ժամանակաշրջանը նրանց վրա դնում է իր կնիքը: Եւ ահա Արա Սարգսյանի խիստ ինքնատիպ եւ խորապես ներգործող արվեստը, նրա բազմակողմանի ու բեղմնավոր գործունեությունը, ինչպես նաեւ հասարակական, ազգային նկրտումները սերտորեն կապված էին խորհրդային ժամանակաների իրականության հետ: Եւ տաղանդի ճակատագիրը նման պայմաններում լինում է ոչ միանշանակ: Ինչպես ասում էր գրչի վարպետը «Բախտի ճամփեքը տարբեր են լինում, բախտը ամենքին սիրում է տարբեր»[1]: Այդպես եղավ նաեւ Արա Սարգսյանի ճակատագիրը. աշխարհի հեռավոր ծածուկ մի անկյունում լույս աշխարհ եկած տղան, որի հանդեպ բնությունը շռայլ էր գտնվել եւ օժտել այն ամենով, ինչով դառնում են իսկական արվեստագետ, իր ինքնությունը պիտի գտներ երկար դեգերումների եւ անընդմեջ որոնումների ճանապարհին: Նրան բնությունն օժտել էր ժամանակի ոգին խորապես ընկալելու եւ արտահայտելու փայլուն տաղանդով: Գուցե սա էր պատճառը, որ չնայած ծնողները, հատկապես մայրը դեմ էր որդու՝ քան-

1 **Պարույր Սեւակ**, Երկեր, հտ. I, Երեւան, 1972, էջ 142:

դակագործ դառնալու որոշմանը, գտնելով այն դժվար պայմաններն ու ժամանակները, որում ապրում էր իրենց ընտանիքը, արդարացված չէ որդու արվեստագետ դառնալու որոշումը, եւ որ նման իրականության պայմաններում նրան վիճակված է հավերժ թափառել արվեստի անդաստաններում: Այնուամենայնիվ այն, ինչ կանխորոշված էր ի վերուստ, որեւէ մեկը փոխել չէր կարող: Եւ այս առիթով ակամայից հիշեցի քանդակագործի հուշերից այս տողերը. «Մայրս, սակայն, չճաշակեց իմ հետագա հաջողությունների քաղցրությունը: Համաշխարհային առաջին պատերազմից հետո մենք այլեւս իրար չտեսանք: Նա հանգավ գեթ մեկ անգամ ինձ տեսնելու եւ կրծքին սեղմելու անհագ կարոտով, օտար, բոլորովին օտար հողում: Նա հետեւեց իմ կյանքի ընթացքին հեռվից միայն եւ երեւի հրճվեց ու աղոթեց, որ գնացել եմ «չամուռից մարդ սարքելու» ուղիով եւ ոչ այն ճանապարհով, ինչ նա խրատում եւ ցույց էր տալիս»[2]:

Ուսումնասիրելով Արա Սարգսյանի կյանքի ճանապարհը՝ չես դադարում հիանալ մարդկային այս հազվագյուտ տեսակի գոյությամբ: Դժվարանում ես մի քանի բառի մեջ ամփոփել այն «մեծ մարդուն», որ ապրում էր նրա մեջ: Այն պարզ հայրենասերին, որ վտանգելով սեփական կյանքը՝ փորձում էր փրկել մեր ազգային արժանապատվությունը եւ պատմական փոխհատուցման այդ առաքինի մարտում ունենալ շատ մեծ դերակատարում, բայց մնալ աննկատ, երբեւէ չշահարկել իր արած գործի ողջ խորությունն ու էությունը («Նեմեզիս»): Հոգու եւ մտքի բոլոր թելերով հայրենիքի հետ կապված, նորն ու կարեւորը տեսնելու երջանիկ կարողությամբ օժտված այս մարդը ապացուցեց, որ հայրենասեր չեն դառնում, այդպիսին ծնվում են՝ թեկուզ հայրենիքից հեռու, օտար, բոլորովին օտար հողում:

Թանգարանի ցուցանմուշներն ու լուսանկարները փաստում են, որ Արա Սարգսյանը այն քանդակագործներից էր, որի նախասիրություններից դուրս չի մնացել քանդակային արվեստի եւ ոչ մի ժանր՝ մոնումենտալ կոթող, լայնածավալ հարթաքանդակ ու դիմապատկեր՝ կատարված ճարտարապետական համալիրի հետ համահունչ, որ ստեղծում է ձեռակերտի եւ անձեռակերտի հիանալի համադրություն, կոմպոզիցիոն, այուժետային հորինվածքներ եւ դիմաքանդակ: Ահա թե ինչ ենք հանդիպում քանդակագործի հուշերում. «Ես սաստիկ սիրում էի պատմության դասը, առանձնապես հունական աշխարհը, նրա դիցաբանությունը: Հատկապես հափշտակված էի հունական արձաններով ու երազում էի մի օր հասնել արվեստի կատարելության այդ աստիճանին: Պորտրե կերտելու առաջին փորձադաշտը եղավ հայրս, ես հոր քանդակել եմ տարբեր կերպարներում, մինչեւ անգամ ԴԱրտանյանի կերպարով: Ինձ ուղղակի հմայում էր Հոմերոսի դեմքը: Հոր պորտրեին հաջորդեց Հոմերոսը, Պերիկլեսը, Դեմոսթենեսը եւ շատ ուրիշներ»[3]:

Եւ գուցե սա է այն նախախնամությունը, որ Արա Սարգսյանի ստեղծագործական ժառանգության գերակշիռ մասը դիմաքանդակային արվեստի անման նմուշներ են, կենդանի եւ խոսուն կերպարների մի ամբողջ աշխարհ: Իր երազած կատարելությանը նա պիտի հասներ Վիեննայի «Վարպետաց դպրոցում» ուսանելու տարիներին: Վիեն-

2 **Արա Սարգսյան**, Հոդվածներ, ելույթներ, հուշեր, Երեւան, 1982, էջ 64-65:
3 **Արա Սարգսյան**, Հոդվածներ, ելույթներ, հուշեր, էջ 66:

նայի շրջանում Արա Սարգսյանը մասնագիտանում է հատկապես դիմաքանդակի ժանրում: Ուսումնասիրելով բնորդներին՝ նա հասնում է խորը նվաճումների թե՛ ֆիզիկական նմանության եւ թե՛ հոգեւոր ինքնության բացահայտման մեջ:

Պետք է նաեւ նշել, որ Սարգսյան-պորտրետիստի ունակությունները արագ զարգանում են Մյուլների շնորհիվ: Նա Վիեննայում դիմաքանդակներ կատարում է ոչ միայն ակադեմիայի հանձնարարականներով, այլեւ ինքնուրույն, ներքին ցանկությունից մղված, իսկ հետագայում նաեւ՝ պատվերներով[4]:

Արդեն 1922 թ. Արա Սարգսյանը ստեղծում է մի շարք դիմաքանդակներ, որոնք մեծ համակրանքի են արժանանում, իսկ 1923 թ. Վիեննայի նկարիչների միության ցուցահանդեսին ներկայացնում է երաժիշտ, պրոֆեսոր Ռիխարդ Ռոբերտի հրաշալի պորտրեն: Այն արտահայտում է մասնագիտական ունակությունների հանրագումարը, նրա խորաթափանց աչքի հզորությունը, վստահ ձեռքի կերտվածքը, որը կարողանում է հնազանդեցնել ամեն տեսակի հումք իր մտահղացմանը: Բայց հաջողությունների ճամփան բռնած տակավին երիտասարդը, Եւրոպայում ազատ ստեղծագործելու հնարավորությունները թողնելով, ռոմանտիկ հայրենասիրությամբ լեցուն, անխախտ եւ վերջնական որոշում է կայացնում վերադառնալ հայրենիք: 1925 թ. քանդակագործը այլեւս հայրենիքում էր: Անշուշտ, պարարտ չէր քանդակագործության հողը երիտասարդ արվեստագետի համար, սակայն նրա վերադարձը միանգամայն արդարացված էր, քանզի այսօր արդեն անհնարին է պատկերացնել Հայաստանը ու մասնավորապես քաղաքամայր Երեւանն առանց Արա Սարգսյանի քանդակների: Իր պատվանդանի բարձունքից մեղմ ու չափազանց մարդկայնորեն մեզ միշտ ժպտում է Թումանյանը, եւ, անկասկած, պետք է ասել, որ քանդակագործը հիրավի ստեղծել է յուրաքանչյուր հայի մեջ արմատացած Թումանյանին՝ պարզ, բայց ոչ երբեք պարզունակ, հարազատ ու սիրելի, շատ ջերմ ու անմիջական: Այնուհետեւ դիտողի առջեւ վեր է հառնում հայկական նախշազարդեր կրող թիկնաթոռի վրա՝ պարտիզուրան ծնկներին դրած, հայ մեծանուն երաժշտագետն ու դիրիժորում է: Սպենդարյանի էության ողջ ոգեղենությունը արտահայտված է այս քանդակի մեջ: Սրանք ազգի պատմությունն ու կենսագրությունը վավերացնող միավորներ են, որոնք դիմանալով ժամանակի փորձությանը՝ դարձել են մեր ազգային գիտակցության անբաժան մասնիկները:

Վիեննայում դիմաքանդակային արվեստում վարպետացած Սարգսյանը այս ժանրի փայլատակումները պիտի ստեղծեր հայրենի հողում եւ հարստացներ հայ քանդակագործական արվեստի գանձարանը նորանոր գլուխգործոցներով: Հոգեբանական խորության հասնող իրապաշտական դիմաքանդակների մեջ անցյալի խորքից մեզ ողջունում են անհատներ, որոնք այս կամ այն կերպ մեր ազգի դիմագիծն են՝ Միքայել Նալբանդյան, Թորոս Թորամանյան, Վարդան Աճեմյան, Սուրեն Սպանդարյան, Վաղարշ Վաղարշյան, Վահան Թոթովենց, Ռաֆֆի, Նիկողայոս Տիգրանյան, Միքայել Մազմանյան, Ալեքսանդր Շիրվանզադե, եւ այս շարքը անվերջանալի է թվում: Սրանք

4 Տե՛ս **В. Тиханова**, Ара Сарксян, Москва, 1962, էջ 15:

սոսկ արտաքին նմանությամբ արված պորտրեներ չէին, Արա Սարգսյանի վիրտուոզությունը այս ժանրում այն էր, որ նրան փայլուն կերպով հաջողվում էր յուրաքանչյուր դիմաքանդակի մեջ փնտրել եւ գտնել առանձնահատուկը, ընդգծել՝ ինչ բնորոշ է եւ այդպիսով սովորական դիմաքանդակը հասցնել կերպարի աստիճանի:

Արա Սարգսյանի դիմաքանդակային արվեստը օժտված է մտքեր եւ տրամադրություններ արտահայտելու ինքնատիպ պլաստիկայով, կերպարն ամբողջացնող քանդակային նյութի ճիշտ ընտրությամբ: Նա, որպես ռեալիստ ստեղծագործող, իր կերպարները փնտրել է կյանքում, տպավորություններ ստացել շրջապատից, գտել իր որոնածը, ապրել է նրանց հետ իրականության եւ միաժամանակ իր երեւակայության մեջ, մտերմացել է նրանց հետ եւ երբ վերջնականապես համոզվել է կերպարի ճշմարտացիության մեջ, կերտել է վերոհիշյալ կերպարները, որոնք այլեւս մշակութային արժեքներ են: Այս համոզմանը գալիս ես, երբ կարդում ես վարպետի հուշերը Թ-որոս Թ-որամանյանի դիմաքանդակը կերտելու վերաբերյալ: Հիրավի պետք է լինել չափազանց նուրբ հոգու, խոր դիտողականության տեր մարդ, որ բնավորությունների եւ զգացմունքների այս հորձանուտում կարողանաս կերտել այնպիսի դիմաքանդակներ, որոնք կունենան միշտ բնորոշը, էականը, այն ինչ հատկանշական է միայն այդ անհատին՝ պահպանելով կերպարի անհատականությունը:

Այնուհետեւ պետք է ստեղծվեր Արա Սարգսյանի քանդակային արվեստի փայլատակումը՝ «Մեսրոպ Մաշտոց եւ Սահակ Պարթեւ»: Պարթեւի ու Մաշտոցի կերպարները հիշեցնում են ճարտարապետական մոնումենտներ. նրանցից ամեն մեկը մի իսկական տաճար է՝ քարակերտ, անսասան, հանդիսավոր: Մույթեր, որոնց վրա հենված է մի ամբողջ ազգի պատմություն: Սահակ Պարթեւի ու Մեսրոպ Մաշտոցի՝ Սարգսյանի կերտած քանդակները ստիպում են հարգել իրենց: Հետաքրքրական է, բայց անկենդան նյութի մեջ հավերժացած ֆիգուրները կենդանի են, միայն թե արձանացած: Չես կարողանում առանց խոնարհանքի անցնել այդ քանդակի կողքով[5]:

Այդպիսին է նաեւ Հայրենական պատերազմի հերոս նահատակներին նվիրված՝ նրա կերտած հուշարձանը Արմավիրի Ջանֆիդա գյուղում: Դրանով քանդակագործը ցանկանում էր ընդծել հոգու անպարտության գաղափարը: Սա որդուն կորցրած մոր վիշտն է, տառապանքը, ինչպես եւ դասական «պիետաներում», վեհ է եւ էպիկական:

Միթե սա չէ ամեն մի արվեստագետի փափագը՝ ստեղծել արվեստ, որ կդիպչի ամեն մի դիտողի սրտին, խոր կներգործի ու կմնա նրա գիտակցության մեջ հավերժ:

Արա Սարգսյանը երջանիկ արվեստագետ է, նրա աշխարհը լի է նման գործերով:

Սարգսյանը ստեղծագործական աշխատանքից բացի նաեւ դասավանդել է գեղարվեստի ակադեմիայում, երկար տարիներ եղել հաստատության հիմնադիր ռեկտորն ու քանդակագործության ամբիոնի վարիչը, գրել է արվեստին ու արվեստագետներին նվիրված մի շարք վերլուծական հոդվածներ:

Պետք է նաեւ նշել, որ քանդակագործությունը չէր միայն, որ ստեղծագործական

5 Տե՛ս **Վ. Հարությունյան**, Արա Սարգսյան, Երեւան, 1975, էջ 31:

հուզումներով էր լցնում մեծ արվեստագետի սիրտը: Նրան մենության ժամերին այցելում էր պոեզիայի մուսան, ինչը եւս մեկ անգամ փաստում է՝ Արա Սարգսյանն ուղեւոր արվեստագետ էր, արվեստի մարդ...

Այս բազմաբովանդակ գործունեության տեր արվեստագետի գեղարվեստական ստեղծագործությունների իսոր գաղափարը եւ անհրաժեշտ մանրամասնություններով զրամարանված հարուստ բովանդակությունը, պատմական ճշմարտացիությամբ ստեղծված կերպարները, միջավայրը, բազմազան գեղարվեստական միջոցների հնարամիտ օգտագործումը, որոնցով նկատելի է դառնում նրա պրպտող, թափանցող միտքը եւ զգայուն հոգին, հիմք են տալիս Արա Սարգսյանին դասել հայ դասականների շարքին: Նա այն արվեստագետն է, որ բացառիկ դեր է կատարել հայ արվեստի զարգացման գործում: Նա նոր բարձրության հասցրեց հայ քանդակագործական դպրոցը՝ հասցնելով իսոր բովանդակության ու գաղափարական նպատակասլացության: Նա ավելի սրտամոտ եւ կարեկցորեն ընկալեց հայ իրականության մեջ տեղ գտած ժամանակի հուզող խնդիրները, հասարակական նշանակություն ունեցող բարձրության հասցրեց իրական կյանքից եւ հայ պատմական անցյալից ընտրված մի շարք կարեւոր թեմաներ: Սարգսյան-քանդակագործի բարձր գաղափարայնությամբ ներծծված գեղարվեստական ժառանգությունը, լինելով Ի. դարի հայ արվեստի պատմության զարգացման բարձրագույն արտահայտություն, իր գեղարվեստական կատարյալ միջոցներով մնում է որպես հայ դասական արվեստի գեղեցկագույն նմուշ, որպես ազգային քանդակագործական արվեստի ավանդության հիմնաքար:

Արա Սարգսյանը իր ապրած կյանքի մեծ մասը նվիրաբերեց վերածնվող հայրենիքի առաջընթացին: Նա մեր հիշողության մեջ միշտ կմնա որպես կենսուրախ, կյանքով լի, բարի, ազնիվ, կամեցող, մեծ սրտի տեր մարդ[6]:

6 Տե՛ս **Գրիգոր Խանջյան**, Հուշեր Արա Սարգսյանի մասին, Երեւան, 1990, էջ 104: